ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆՈ» (ՆԱԽԱՐՈՍՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (17046) ՇԱԲԱԹ 21 ՄԱՅԻՍԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ԲՐՅՈՒՍԵԼ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

Մայիսի 17-18-ը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Բրյուսելում: Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը բարձր մակարդակի հանդիպումներ ունեցավ Եվրախորհրդում, Եվրախորհրդարանում, Եվրահանձնաժողովում: Իրակլի Ղարիբաշվիլին Բրյուսելում, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, հանդիպում ունեցավ նաեւ Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի հետ:

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ՀԱՐՑՈՎ ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒՄ

Աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը Բրյուսելում հանդիպումներ ունեցավ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրախորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլայի, Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ Ջոզեֆ Բորելի, Եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Օլիվեր Վարհեի հետ:

Հանդիպումներին քննարկվեցին Վրաստանի Եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման օրակարգի, Եվրահանձնաժողովի հարցաշարի հետ կապված հարցերը, ինչպես նաեւ տարածաշրջանում անվտանգության իրավիճակը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 18-19-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով օգնական Դերեկ Շոլեհին:

Այցի շրջանակներում, ամերիկյան արտաքին գերատեսչության ներկայացուցիչը հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ, այցելեց երկրի պաշտպանության նախարարություն, հանդիպումներ անցկացրեց նաեւ ընդդիմադիր կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով օգնականի հանդիպմանը, կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ առկա ռազմավարական գործընկերությունը եւ հետագա համագործակցության հեռանկարները, ընդգծեցին ռազմավարական գործընկերության կարեւորությունը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՐԱՏԱՊ

ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻ. «ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐ ՉՈՒՆԻ»

Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, երկրի կառավարության հերթական նիստի ավարտից հետո, հանդես եկավ նավթի գների, ալյուրի ներկրման եւ հացի թանկացման հարցերի կապակցությամբ ստեղծված իրավիճակին, եւ դրա կարգավորման համար կառավարության ձեռնարկած միջոցառումներին:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ՝ ՑԱԾՐ ԳՆԵՐՈՎ

Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, անդրադառնալով բենզինի թանկացման հարցին, հայտարարեց, որ ներկայումս քննարկվում է էժան աղբյուրներից վառելիքի մատակարարման հնարավորությունը, ինչպես նաեւ նավազագույնի հասցնելու

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Մայիսի 20-ին Վրաստանի հանրային դպրոցների 12-րդ դասարանցիների համար հնչեց ավարտական վերջին զանգը:

Շրջանավարտների համար այդ նշանակալի իրադարձության կապակցությամբ շնորհավորանքներ հղեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին:

«Շատ երիտասարդներ այսօր նշում են իրենց կյանքի առաջին փուլի ավարտը, առաջին հաջողությունը:

Համոզված եմ, որ կյանքի այս նոր փուլը կդառնա ձեր ապագա հաջողությունների եւ առաջընթացի հիմքը: Ես հավատում եմ, որ մեր երկրի եւ հասարակության կյանքում դուք ձեր խոսքն ասելու եք երիտասարդին հատուկ թարմությամբ:

Ուզում եմ՝ բոլորն իմանան, որ Վրաստանի կառավարությունն ամեն ինչ անում է, որ ձեզ բոլոր հնարավորությունները տա՝ օգտագործել ձեր անհատական ռեսուրսները, կրթություն ստանալ, դառնալ մրցունակ, տարբեր ոլորտներում մասնագետներ եւ ծառայել մեր երկրին»,- ասված է վարչապետի շնորհավորական ուղերձում:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

1918 թվականի մայիսի 26-ին, Թբիլիսիում Վրաստանի Ազգային խորհուրդը հռչակեց երկրի անկախությունը, ընդունվեց «Վրաստանի անկախության հռչակագիրը»:

Հռչակագրով՝ Վրաստանի ժողովրդին վերապահվում էին ինքնիշխան իրավունքներ, իսկ Վրաստանը դառնում էր լիարժեք ժողովրդավարական Հանրապետություն: Վրաստանը վերապահում էր միջազգային պատերազմների ժամանակ չեզոքություն պահպանող երկրի իրավունքն ու իր սահմանների շրջանակներում հավասարապես ապահովում բոլորի քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները՝ անկախ ազգային, կրոնական պատկանելության, սոցիալական վիճակի ու սեռի: Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը պարտավորվում էր բոլոր պայմանները ստեղծել իր տարածքում բնակվող ազգերի ազատ զարգացման համար:

Իսկ 1919 թվականի մարտի 21-ին, դրանից մեկ շաբաթ առաջ ընտրված Հիմնադիր ժողովը հաստատել էր անկախ պետության առաջին կառավարությունը՝ վարչապետ Նոե Ժորդանիայի ղեկավարությամբ:

Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը գոյություն ունեցավ երեք տարի, մինչեւ 1921 թվականի փետրվարի 25-ը, երբ 11-րդ՝ Կարմիր բանակը գրավեց Թբիլիսին:

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆԷ

Մայիսի 28-ին Հայաստանը նշում է Հայաստանի Առաջին Հանրապետության օրը: Մայիսի 26-ին, Սարդարապատում պարտության մատնելով թուրքական բանակին, հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքական ներխուժումն Անդրկովկաս եւ փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց «Հայկական ազգային խորհրդի» կողմից 1918 թվականի մայիսի 28-ին, Թիֆլիսում, Անդրկովկասյան Ժողովրդավարական դաշնային հանրապետության փլուզումից հետո: Մայիսի 29-ին Հովհաննես Քաջազնունին նշանակվեց անկախ Հայաստանի առաջին վարչապետ, երկրի մայրաքաղաքը դարձավ Երեւանը: Հայաստանի Հանրապետությունը գոյություն ունեցավ ընդամենը երկու տարի, մինչեւ 1920 թվականի դեկտեմբերի 2-ը, երբ Երեւան մտան 11-րդ՝ Կարմիր բանակի զորամասերը, եւ հանրապետությունը խորհրդայնացվեց: 1991 թվականից մայիսի 28-ը հռչակվեց որպես Հայաստանի Առաջին Հանրապետության օր:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՄԵՐ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ ՁԵԶ, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ



Սիրելի Հայր Սուրբ, «Վրաստան» թերթի աշխատակազմը, ընթերցողները սիրով շնորհավորում են Ձեզ՝ ծննդյան 40-ամյա հոբելյանի առիթով:

Մեծապես գնահատում ենք, որ նվիրումով լծվել եք Վիրահայոց թեմի հոգեւոր եւ եկեղեցական կյանքի կազմակերպմանն ու առաջնորդմանը՝ բարձր պահելով Հայ Առաքելական եկեղեցու սպասավորի պատիվն ու հավատարիմ մնալով մարդասիրության, բարեգթության ու խաղաղասիրության սկզբունքներին: Ձեր ամենօրյա գործունեությամբ ու աշխատանքով իրականացնում եք քրիստոնեական դաստիարակությանն ու քարոզչությանը միտված առաքելություն: Գնահատելի է Ձեր ներդրումը Հայ ու Վրաց քրիստոնյա եկեղեցիների բարի ու նպաստավոր փոխհարաբերությունների է՛լ ավելի ամրապնդման գործում: Վստահ ենք, որ Ձեր աղոթքներն առ Աստված կօգնեն մեր Հայաստան ու Վրաստան երկրներին հաղթահարելու դարի մարտահրավերները, ապրելու խաղաղության ու բարեկամության մթնոլորտում՝ նոր ուժով ու անսասան հավատով:

Մաղթում ենք քաջառողջություն, բարի եւ խաղաղ հոգեւոր ծառայություն:

«Վրաստան» թերթի խմբագրություն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ԲՐՅՈՒՍԵԼ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվրակառույցների ղեկավարների հետ հանդիպմանը Վրաստանի վարչապետը առանձնակի նշեց, որ երկիրը բարձր է գնահատում Եվրախորհրդարանի եւ ԵՄ կառույցների անսասան աջակցությունը եվրահինտեգրման ճանապարհին, հատկապես՝ Վրաստանի համար այդքան կարեւոր պահին, երբ երկիրը սպասում է Եվրահանձնաժողովի գնահատականին ու համապատասխան որոշմանը: Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով, Վրաստանի լիակատար ինտեգրումը Եվրամիությանը ոչ միայն Վրաստանի քաղաքական ղեկավարության, այլ նաեւ երկրի ժողովրդի ընտրությունն ու Վրաստանի կառավարության գլխավոր առաջնահերթությունն է: Քննակվեց նաեւ Վրաստանի եւ Եվրամիության միջեւ վերջին տարիներին ինտենսիվ համագործակցության դինամիկան, նշվեց երկրի առաջընթացը տնտեսական, քաղաքական եւ ժողովրդավարացման բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ուշադրությունը կենտրոնացվեց Ասոցիացման համաձայնագրի իրականացմանն ու տարբեր ոլորտներում հաջող համագործակցությունը:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՆԱՏՕ-Ի ՎՍՏԱՀԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԴԵՐԸ

Բրյուսելում, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քատուղար Ենս Ստոլտենբերգի հետ:

Հանդիպմանը եւս մեկ անգամ ընդգծվեցին Վրաստանի եվրատլանտյան նկրտումները, ինչը երկրի արտաքին եւ անվտանգության քաղաքականության առաջնահերթությունն է, ինչպես Դաշինքի, այնպես էլ՝ գործընկեր երկրների ամուր աջակցությունն ու սերտ համագործակցությունը Վրաստանի եվրատլանտյան նկրտումների ուղղությամբ: Դրական գնահատական տրվեց Դաշինքին ինտեգրվելու ճանապարհին Վրաստանի իրականացրած բարեփոխումներին:

Վրաստանի վարչապետի եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ հանդիպմանը վերահաստատվեց Վրաստանի՝ որպես Դաշինքի ուժեղ եւ վստահելի գործընկերոջ դերը եւ նրա կարեւոր ներդրումը համաշխարհային անվտանգության, ինչպես նաեւ Սեւծովյան տարածաշրջանի անվտանգության ապահովման գործընթացում:

Հանդիպմանը կողմերը հույս հայտնեցին, որ Վրաստանի առաջընթացն ու ձգտումները համարժեք կերպով կարտացոլվեն Դաշինքի հետագա որոշումներում՝ ինչպես երկրի նկրտումներին քաղաքական աջակցության, այնպես էլ՝ նրա գործնական կարողությունների ամրապնդման առումով:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Քննարկեց օկուպացված տարածքներում ստեղծված ծանր իրավիճակը: Ամերիկյան կողմը վերահաստատեց իր ամուր աջակցությունը Վրաստանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը:

Քննարկվեցին նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցեր:

Հանդիպմանը կարեւորվեց Վրաստանի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը Եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին: Նշվեց, որ Վրաստանի կառավարությունը այս գործընթացում առանձնահատուկ նշանակություն է տալիս ԱՄՆ-ի հետ համագործակցությանը:

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ՀԱՎԼԱԲԱՐԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ԴՐՎԵՑ ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԱԶԳԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉՔԱՐ

2022 թվականի մայիսի 15-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ, եկեղեցու բակում տեղի ունեցավ հայ եւ վրաց ազգերի դարավոր բարեկամությանը նվիրված խաչքարի օրհնության կարգ:

Թբիլիսահայերը եկել էին մասնակցելու այն արարողությանը, որն իրենց սրտամոտ էր ու հարազատ, քանի որ խաչքարը նվիրված էր հայերի եւ վրացիների միմյանց կողք-կողքի ապրելու, միմյանց աջակցելու ու համագործակցելու ավանդույթի պահպանմանը:

Ծնունդով թբիլիսահայ Մխիթարյան ընտանիքը, որ տասնամյակներ շարունակ ապրել է Թբիլիսիում, աստվածահաճո փափագով, Լեւոն եւ Գուրգեն եղբայրների նախաձեռնությամբ, Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում կանգնեցրեց խաչքար:

Խաչքարի օրհնության արարողությունն իրականացվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի ձեռամբ եւ հոգեւոր դասի մասնակցությամբ:

Սավանը խաչքարից իջեցրեց ընտանիքի հայրը՝ Իշխան Մխիթարյանը:

Տոնական հանդիսությանը մասնակից Թբիլիսիի սակրեբուլոյի մշակույթի հանձնաժողովի նախագահ, Թբիլիսիի Իսանիի մունիցիպալիտետի վարչության նախկին նախագահ Կախա Լաբուչիձեն, անդրադարձ կատարեց հայ եւ վրաց ժողովուրդների հոգեհարազատությանը, հիշեց 1989 թվականի ապրիլյան դեպքերը, երբ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից խաչքար կանգնեցվեց Հավլաբար թաղամասում Վրաստանի անկախության համար զոհվածների հիշատակին: Եվ ընդգծեց, որ այսօր արդեն եկեղեցու բակում տեղադրված խաչքարը եղբայրության ու բարեկամության անշրջելիության խորհուրդ ունի:

Հավարտ հանդիսության, Մխիթարյան ընտանիքի կողմից կատարվեց մատաղի հյուրասիրություն:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ 195 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱՎԹԻՑ ՈՒ ԳԱԶԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եվրամիությունն առաջիկա հինգ տարում լրացուցիչ 195 միլարդ եվրո կծախսի Ռուսաստանից էներգետիկական կախվածությունից ազատվելու համար:

Եվրահանձնաժողովի փաստաթղթում ասված է, որ «ռուսական հանածո վառելիքից կախվածության արագ նվազումը հնարավոր է մաքուր էներգիայի արագ անցման հաշվին»: Հանուն դրա, վերականգնվող աղբյուրներից էներգիայի բաժինը 2020 թվականի 22 տոկոսից 2030 թվականին պետք է հասցնել մինչեւ 45 տոկոսի:

ՇՎԵԴԻԱ-ՖԻՆԼԱՆԴԻԱ ՈՐՈՇԵՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՆԱՏՕ-ԻՆ

Շվեդիան եւ Ֆինլանդիան, հրաժարվելով բազմամյա չեզոքությունից, Ուկրաինայի դեմ ռուսական ագրեսիայից հետո, որոշեցին անդամակցել ՆԱՏՕ-ին: ՆԱՏՕ-ն ողջունում է Դաշինքին անդամակցության համար՝ Շվեդիայի եւ Ֆինլանդիայի հայտեր տալը, երաշխավորում է դրա համար անհրաժեշտ հարցերի շուտափույթ լուծումը, հայտարարեց Դաշինքի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը:

ԹՈՒՐՔԻԱ ԷՐԴՈՂԱՆԸ ԴԵՄ Է ՇՎԵԴԻԱՅԻ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Թուրքիայի նախագահ Ռեջեբ Թայիբ Էրդողանը հայտարարել է, որ Անկարան չի համաձայնի ՆԱՏՕ-ին Ֆինլանդիայի եւ Շվեդիայի միանալուն այն բանից հետո, երբ երկու երկրները հրաժարվեցին կատարել հանրապետության խնդրանքը՝ ահաբեկչական կազմակերպությունների հետ կապ ունեցող անձանց արտահանձնման վերաբերյալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ «ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ ՄԵԾ ՅՈԹՆՅԱԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԶ ՉԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ»

Ռուսաստանի անվտանգության խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեդվեդեւը, մեկնաբանելով մեծ յոթնյակի հայտարարությունը, ըստ որի, չեն ճանաչի անկախ երկրների սահմանների փոփոխման Կրեմլի նկրտումները, հայտարարեց, որ դա իրեն ընդհանրապես չի հետաքրքրում եւ Արեւմուտքին խորհուրդ տվեց մտածել իրենց բնակչության մասին:

- Մեղմ ասած, թքած ունենք Մեծ յոթնյակի հայտարարության վրա: Տվյալ պարագայում կարեւորն այդ երկրամասերում ապրող բնակչության կամքն է: Թող չմոռանան Կոսովոյի օրինակը,- հայտարարեց Ռուսաստանի նախկին նախագահ Դմիտրի Մեդվեդեւը:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԸՍՏ ԿԻԵՎԻ՝ ՏԱՐՀԱՆՈՒՄ, ԸՍՏ ՄՈՍԿՎԱՅԻ՝ ԳԵՐԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինայում պատերազմի 86-րդ օրն է: Ուկրաինայի եւ ողջ աշխարհի համար հրատապ ու նշանակալի է «Ազով» գնդի զինծառայողների ճակատագիրը, ովքեր գերվել են ռուսների կողմից եւ գտնվում են նրանց կողմից վերահսկվող տարածքներում:

Ռուսական կողմի հայտարարությամբ, Մարիուպոլի «Ազովստալ» գործարանի տարածքից դուրս է եկել եւ հանձնվել 1700 ուկրաինացի զինծառայող, որոնցից 80-ը վիրավոր է: Այդ տեղեկատվությունն ուկրաինական կողմը դեռեւս չի հաստատում: Ըստ տարածված տեղեկատվության, գործարանի տարածքում այժմ էլ գտնվում է շուրջ 2500 զինծառայող եւ խաղաղ բնակիչ:

Դեռեւս հայտնի չէ, թե խուզարկությունից հետո ռուսները ո՞ւր են փոխադրելու գերված ուկրաինացի զինծառայողներին, թեեւ ռուսների հավաստմամբ, վիրավորներին փոխադրել են իրենց վերահսկողության տակ գտնվող Ելենովկա քաղաք: Ըստ երեւույթին, այդ քաղաքում են պահում նաեւ գերեվարված զինծառայողներին:

Հատկանշական է, որ մարտնչող կողմերի միմյանց հակասող տեղեկատվություններն առնչվում են նաեւ «Ազովստալից» զինծառայողների դուրս գալուն՝ ըստ Կիեւի, գործարանից իրականացվում է տարհանում (էվակուացիա), իսկ ըստ Մոսկվայի՝ գերեվարություն: Հակասական է նաեւ գործարանից զինծառայողների դուրս գալու պարզաբանումը: Մոսկվայի պնդմամբ, ուկրաինացիները գործարանից դուրս են եկել սպիտակ դրոշներով, որը եւ տեսագրվել է, իսկ ուկրաինական կողմի հավաստմամբ, «Ազով» գնդի զինծառայողները շարունակում են կռիվը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՎԱԾ ԵՆ

Ինչպես հայտարարեց Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավարի խորհրդական Միխայիլ Պոդոլյակը, Ռուսաստանի հետ բանակցությունները դադարեցվել են:

- Կարծում եմ, որ բանակցային գործընթացը կվերսկսվի, եւ ինձ թվում է, որ մոդերատորը կլինի Զելենսկին,- ասաց Միխայիլ Պոդոլյակը:

ՌԴ փոխարտգործնախարար Անդրեյ Ռուդենկոն հայտարարել էր, որ Կիեւը գործնականում դուրս է եկել Մոսկվայի հետ բանակցային գործընթացից:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԶՈՀ Է ԴԱՐՁԵԼ 250 ԵՐԵԽԱ

ՄԱԿ-ի տվյալներով, Ուկրաինայում պատերազմի մեկնարկից ի վեր 3 752 խաղաղ բնակիչ է զոհվել, 4 062-ը՝ վիրավորվել: Մահացածների թվում կա 250 երեխա:

ՄԱԿ-ը նշում է, որ այս տվյալները ճշգրիտ չեն, իսկ զոհերի իրական թիվը շատ ավելի մեծ է, քանի որ ինտենսիվ ռազմական գործողություններ տեղի ունեցող տարածքներից տեղեկատվությունը չի կարող ստուգվել:

Մասնավորապես, ՄԱԿ-ը Մարիուպոլից, Իզյումից եւ Պոպասնայայից զոհերի մասին ամբողջական տեղեկատվություն չունի: Մարիուպոլի քաղաքապետի խոսքով, քաղաքում զոհվել է առնվազն 20 հազար մարդ:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՃԱՆԱՉԻ ԴԵ ՖԱԿՏՈ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵ ՖԱԿՏՈ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԵ ՖԱԿՏՈ ՀԱՆՐԱՔՎԵՆ»

Վրաստանի կառավարող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով բռնազավթված Ցխինվալիի տարածաշրջանում անցկացվեց, այսպես կոչված Հարավային Օսեթիայի Հանրապետության նախագահի ընտրությունները, ինչպես նաեւ ինքնահռչակ հանրապետության գործող նախագահ Անատոլի Բիբիլովի եւ նորընտիր նախագահ Ալան Գագլոեւի (մայիսի 24-ից՝ գործող նախագահ) հայտարարություններին:

Նրանք նշեցին, որ իրենք լրիվությամբ պաշտպանում են «պառակտված օս ժողովրդին միացյալ Ռուսաստանում միավորելու գաղափարը, եւ Հարավային Օսեթիայի միավորումը Ռուսաստանին օս ժողովրդի վաղեմի երազանքն է», եւ որ «Հարավային Օսեթիան Ռուսաստանին միանալու մասին հանրաքվեն կանցկացվի հուլիսի 17-ին»: Արձագանքելով հայտարարությանը՝ Կոբախիձեն հայտարարեց, որ Վրաստանը երբեք չի ճանաչի դե ֆակտո իշխանությունը, դե ֆակտո ընտրությունները, ոչ էլ դե ֆակտո հանրաքվեն:

- Ինչ վերաբերում է նման նախաձեռնություններին, ապա մենք ունենք հստակ քաղաքականություն եւ չենք ճանաչում ո՛չ դե ֆակտո իշխանությունը, ո՛չ դե ֆակտո ընտրությունները, ո՛չ էլ դե ֆակտո հանրաքվեն: Մեր դիրքորոշումն այս հարցում շատ պարզ է ու շատ հստակ: Ուստի, բնական է ճիշտ նույն գծով գնալ,- ասել է Իրակլի Կոբախիձեն:

«Վրացական երազանք»-ի նախագահը խոսեց նաեւ Ցխինվալիի շրջանի նկատմամբ նախկին իշխանությունների քաղաքականության մասին՝ նշելով, որ հանրաքվեն եւ փշալարերը հենց «Ազգային շարժման» թողած քաղաքականության ժառանգությունն են:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԿՓՈԽԱՆՑԻ «ԼԻԲԵՐԹԻ ԲԱՆԿԸ»

Կենսաթոշակների փոխանցման պետական ծրագրի իրականացման համար համապատասխան բանկի ընտրության նպատակով Վրաստանի կառավարության կողմից հայտարարվեց էլեկտրոնային մրցույթ:

Հանրագումարելով մրցույթի արդյունքները՝ Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին հայտարարեց, որ Վրաստանում առաջիկա 7 տարիներին եւս կենսաթոշակները կտրամադրվեն «Լիբերթի բանկի» միջոցով, որը կրկին հաղթել է հայտարարված էլեկտրոնային մրցույթում:

«Լիբերթի բանկը» այս ծառայությունն առաջարկում է պետությանը 105 մլն լարիով:

«Լիբերթի բանկը» նշել է, որ ունի մրցակցային առավելություն սոցիալական տրանսֆերտների բաշխման հարցում, քանի որ բանկը կենսաթոշակներ է բաշխում 2001 թվականից եւ ունի ամենամեծ ցանցը ողջ երկրում՝ բաղկացած մասնաճյուղերից, շարժական սպասարկման կենտրոններից ու բանկոմատներից:

ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿՆՎԱԶԻ

Մայիսի 16-ին, երկրի կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ թոշակառուների համար վարկի տոկոսադրույքը շատ բարձր է եղել:

- Տարիներ շարունակ խնդիրը թոշակառուների բանկային տոկոսադրույքն էր: Նույնիսկ մեր կառավարություն գալուց առաջ, որոշ դեպքերում տոկոսադրույքը եղել է նույնիսկ 100 տոկոս,- նշեց վարչապետն ու հավելեց, որ առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլու եւ ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլու, ինչպես նաեւ երկրի խորհրդարանի համապատասխան հանձնաժողովների անդամների մասնակցությամբ, հիմնվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է այդ հարցը:

Վրաստանի փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Զուրաբ Ազարաշվիլու խոսքով, ընդունած տարբերակի համաձայն, կենսաթոշակային վարկը կախված կլինի վերաֆինանսավորման տոկոսադրույքից եւ կկազմի առավելագույնը 15 տոկոս:

- Ելնելով այն հանգամանքից, որ մենք ակնկալում ենք վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազում, ապա վարկերի տոկոսադրույքը զգալիորեն կնվազի, եւ կենսաթոշակառուների համար վարկերի ու սպասարկման պայմաններն այս տարիների ընթացքում է՛լ ավելի մատչելի կդառնան,- ասաց Զուրաբ Ազարաշվիլին:

Նշենք նաեւ, որ Վրաստանում մոտ 800 հազար թոշակառու կա, նրանց գրեթե կեսը կենսաթոշակային վարկեր է վերցրել:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 14,4 ՏՈԿՈՍ

Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ տնտեսությունն աճում է, եւ առաջին եռամսյակում գրանցվել է 14,4 տոկոս աճ:

Վարչապետի խոսքով, աճում են ինչպես տեղական արտահանումը, այնպես էլ՝ զբոսաշրջությունն ու տրանսֆերտները:

- Հունվարին ունեցել ենք 18 տոկոս աճ, փետրվարին՝ 14,6, իսկ մարտին իրական աճը կազմել է 10,6 տոկոս: Ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ, մենք ունենք շատ դրական դինամիկա,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՆԱԽԱԳԾՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ՝ ԳՈՐԻԻ ԵՎ ԱՍՊԻՆՁԱՅԻ ՄՈՏԱԿԱՅՔՈՒՄ

Ծրագրվում է նոր էլեկտրակայաններ, որոնք կտեղակայվեն Ասպինձա, Գորի քաղաքների, ինչպես նաեւ Քսանի գյուղի մոտակայքում:

Վրաստանի կառավարությունն ընդունել է որոշում քամու, արեւի եւ հիդրո լրացուցիչ կայանների շինարարության վերաբերյալ: Ծրագրված էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմելու է 150 մվտ:

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Ռոմեո Միքաուտածեի խոսքով, քամու կայանը կունենա 110 մվտ, արեւինը՝ 20 մվտ հզորություն:

Նախագծի ներդրումային արժեքը կազմում է 200 միլիոն դոլար: Նոր էլեկտրակայանները ծրագրվում է կառուցել արտասահմանյան եւ տեղական ներդրումների հաշվին: Փոխնախարարի պարզաբանմամբ, նոր հզորությունները կդառնան վրաց էլեկտրահամակարգի հատվածը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ

ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՏԵՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանի եւ տեղի երիտասարդների միջեւ տեղի ունեցավ հանդիպում՝ «Համամասնակցային բյուջետավորում՝ հանուն քաղաքացիների շահերի» ծրագիրի շրջանակներում, որը իրականացրեց Սամցխե-Ջավախեթիի «Մեդիա կենտրոնը»:

Հանդիպմանը քննարկվեցին Նինոծմինդայի մունիցիպալիտետի երիտասարդության հնարավորություններն ու մարտահրավերները, ինչպես նաեւ բյուջետավորման գործընթացում տեղի երիտասարդության ներգրավվածության հետ կապված հարցեր:

- Ցանկանում ենք եւ ձգտում ամեն ինչ անել, որպեսզի երիտասարդներն ավելի ակտիվ լինեն, առաջ տանեն իրենց նախաձեռնությունները,- նշել է քաղաքապետ Անի Մոսոյանը:

ՎԱՐԺԱՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ

Մայիսի 17-19-ը Հայաստանի Ալավերդու քաղաքապետարանում տեղի ունեցավ Եվրոպական առաջնորդության ակադեմիայի թրեյնինգ, որը համատեղ կազմակերպել էին Ավստրիական զարգացման համագործակցությունն ու Եվրոպայի խորհուրդը՝ «Վրաստանի եւ Հայաստանի սահմանամերձ քաղաքապետարանների համագործակցության համար» թեմայով:

Սեմինարին մասնակցում էին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետի առաջին տեղակալ Ալեքսանդրե Միքելաձեն եւ փոխքաղաքապետ Արմեն Բդոյանը:

Մասնակիցները քննարկեցին հարեւան երկրների քաղաքապետարանների միջեւ հարաբերությունների խորացումն ու միջսահմանային համագործակցության հաջողված օրինակները:

Հանդիպմանը մասնակցում էին Եվրոպայի խորհրդի կառավարման փորձագիտական կենտրոնի եւ Ավստրիայի դեսպանատան տեխնիկական համագործակցության գրասենյակի ներկայացուցիչներ, ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների փոխնախարար Վաչե Տերտերյանը եւ Վրաստանի տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցվածքների փոխնախարար Մզիա Գիորգոբիանին:

Եվրոպական առաջնորդության ակադեմիայի թրեյնինգին վրացական կողմից մասնակցում էին Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի, հայկական կողմից՝ Շիրակի, Լոռու եւ Տավուշի մարզերի քաղաքապետարանների ներկայացուցիչները:

«ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ» ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Մայիսի 15-ին Ախալքալաքիում նշվեց «Ընտանիքի միջազգային օրը»: «Խաս Բախչա» կոչվող այգում տոնի կապակցությամբ անցկացվեց միջոցառում, որին մասնակցեցին Ախալքալաքիի պարի համույթները, երաժշտական դպրոցի ու մանկապարտեզների սաները:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԲԱԹՈՒՄԻ-ԱԽԱԼՑԻԽԵ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Ակտիվ ընթացքի մեջ են «Բաթումի-Ախալցիխիե» միջպետական նշանակության ճանապարհի «Խուլո-Զարզմա» հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտի տեղեկատվությամբ, ծրագիրը բաժանված է 3 մասի, ընդհանուր առմամբ, կվերականգնվի 47 կմ ճանապարհահատված եւ 7 կամուրջ:

Նշվում է, որ «Խուլո-Զարզմա» հատվածի վերակառուցման ծրագրի շրջանակներում, կիրականացվի ճանապարհի երկշերտ ասֆալտաբետոնապատում: 5 կմ երկարությամբ հատվածը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի արժեքը կազմում է 14,6 մլն լարի (մոտ 4 մլն 866 հազար 666 դոլար): Իսկ 42 կմ հատվածը ֆինանսավորվում է Քուվեյթի հիմնադրամի կողմից.

Նորացված երթուղու ընթացքում Բաթումից Ախալցիխիե հասնելու ժամանակը կկրճատվի 1,5 ժամով:

ՀՐԱՏԱՊ

ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻ. «ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐ ՉՈՒՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մարժաները (ինքնարժեք-եկամուտ)՝ բնակչությանը վառելիքն առավելագույնս շահավետ պայմաններով ապահովելու համար:

- Մեզ համար կարեւոր է վառելիքի շուկայում լիարժեք, մրցակցային միջավայր ունենալը եւ բնակչությանը ամենաէժան ու բարենպաստ պայմաններով վառելիք մատակարարել: Աշխարհաքաղաքական իրավիճակի, տարածաշրջանում պատերազմական իրավիճակի պատճառով, ցավոք, վառելիքի համաշխարհային գները շատ բարձր են, եւ մենք հասկանում ենք, որ Վրաստանը չի կարող բաց թողնել համաշխարհային միտումը, բայց մեր նպատակն է համակարգել վառելիքի մատակարարումն էժան աղբյուրներից, ինչպես նաեւ նվազագույնի հասցնել մարժան, վառելիք մատակարարել ամենանպաստավոր պայմաններով,- ասաց Լեւան Դավիթաշվիլին եւ հավելեց, որ փոքր ցանցերի ներկայացուցիչների հետ քննարկվել են վառելիքի շուկայում տիրող իրավիճակն ու կանխատեսումները:

- Մեզ համար շատ կարեւոր է գնի իջեցումը եւ ամենաթանկ վառելիքը բնակչությանը ամենանպաստավոր, էժան ու մատչելի պայմաններում ապահովելը, այդ մասին խոսել ենք փոքր ցանցերի ներկայացուցիչների հետ: Քննարկեցինք նաեւ նրանց բարձրաձայնած խնդիրները, խոսեցինք այն մասին, թե պետությունն ինչ կարող է անել մրցունակությունը բարձրացնելու համար, խոսեցինք մատակարարման այլընտրանքային աղբյուրների մասին, որոնք կարող են լինել համեմատաբար ավելի էժան, ինչպես նաեւ որակի եւ հուսալիության խնդիրների մասին,- ասել է էկոնոմիկայի նախարարը:

Փոխվարչապետի խոսքով, կառավարությունը նավթային ընկերություններին կոչ է անում նվազեցնել վառելիքի մանրածախ վաճառքի գինը:

- Մրցակցային գործակալությունն ուսումնասիրել է շուկան, հետաքրքիր բացահայտումներ ունի: Հարցը քննարկել ենք շաբաթ օրը կառավարության տնտեսական թիմի նիստում: Սա ցույց է տալիս, որ շուկայում մանրածախ գներն էապես տարբերվում են, եւ այն աճի վրա եղած ազդեցությունը համահունչ չէ միջազգային շուկայում գների աճին,- նշեց Լեւան Դավիթաշվիլին:

ԱԼՅՈՒՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

Անդրադառնալով բնակչության պարենային անվտանգության թեմային՝ փոխվարչապետը հայտարարեց, որ ալյուրի ներկրման համար արհեստական խոչընդոտների ստեղծումն անընդունելի է Վրաստանի կառավարության համար:

- Երկրում ալյուր կա, պարենային անվտանգության առումով երկիրը խնդիր չունի: Մեզ համար հիմնական ելակետը բնակչության համար հացի հասանելիությունն է ու հնարավորինս մատչելի գները,- ասաց Լեւան Դավիթաշվիլին ու հավելեց, որ այս առումով Վրաստանում պարենային անվտանգության խնդիրն օրակարգային չէ, քանի որ ալյուրի ներկրումն ակտիվորեն իրականացվում է, ու երկիրն ունի ցորենի որոշակի պաշարներ:

- Վրաստանն այսօր տարանցիկ երկիր է, որը հետաքրքրված է իր նավահանգստային եւ տրանսպորտային ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ցորեն արտահանող երկրներով: Մեր միջանցքով ցորեն է շարժվում, եւ հետեւաբար հաշվի են առնվում անվտանգության խնդիրները, որոնց մասին դուք խոսում եք, եւ երկիրը խնդիրներ չունի,- հայտարարեց Լեւան Դավիթաշվիլին:

ՀԱՑԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ՉԿԱՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին.

- Այսօր հացի թանկացման նախադրյալ չկան: Իհարկե, թանկացումը ձեռնտու չէ իշխանությանը եւ չի բխում հանրային շահերից: Գլխավորն այն է, որ մենք ունենք մանրակրկիտ մոնիթորինգ, թե ինչպես է մեզ հաջողվում ապահովել սնունդը մեր երկրին, եւ այդպես էլ կլինի: Սրա պատասխանատու գյուղատնտեսության նախարարությունն է, եւ կարծում եմ՝ շատ լավ են անում:

Եթե բնապահպանական գործոնները փոխվեն, իհարկե, ամեն ինչ կարող է լինել, բայց, այս բնապահպանական գործոնները հաշվի առնելով՝ ներկա իրավիճակում դրա նախադրյալը չկա,- ասաց Լեւան Դավիթաշվիլին:

ԵՐԿՐՈՒՄ ԱԼՅՈՒՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՊԱՏՃԱՌ ՉԿԱ

Վրաստանի շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ երկրում ցորենի ներմուծումը հիմնականում փոխարինվել է ալյուրի ներկրմամբ՝ էժան ալյուրի պաշարների պայմաններում, ընդ որում՝ ցորենի ներմուծումն ու դրա պաշարները ինքնաբերաբար կրճատվում են:

«Այսօր ունենք ավելի քան բավարար պաշար, բայց ունենք ալյուրի տեսքով, ոչ թե՝ ցորենի: Մոտ մեկուկես ամսից, երկու ամսից կսկսվի տեղական ցորենի բերքահավաքը: Հուլիս-օգոստոսը աշխարհում հացահատիկային մշակաբույսերի նոր բերք ստանալու սեզոնն է: Նոր բերքը կբերի գնային նոր քաղաքականության մշակման: Այսօր ցորենի գները կտրուկ բարձրացել են՝ փաստացի կրկնապատկվելով: Ուստի Վրաստանի կառավարությունը կգործի ստեղծված իրավիճակին համապատասխան»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՀԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Ինչպես հայտարարեց «Հաց արտադրողների միության» նախագահ Մալխազ Դոլիձեն, մայիսին Վրաստանում հացը թանկացել է արդեն 10 թեթրիով, թեեւ մինչեւ մայիսի վերջ հացն այլեւս չի թանկանա:

- Մայիսին հացը թանկացավ 10 թեթրիով,- ասաց Մալխազ Դոլիձեն եւ հավելեց, որ, երկրում ցորենի պաշարների սպառման եւ գործարանների փակման կապակցությամբ, մայիսի 13-ին ասոցիացիայի տարածած հայտարարությունից հետո, ալյուր ներկրողները մեկ պարկ ալյուրը թանկացրել են մոտ 3 լարիով.

- Կարող եմ ասել, որ երկիր ալյուր է մտնում: Մենք այս պահին ունենք 2 ամսվա ալյուրի պաշար, ուստի հացի հետ կապված խնդիրներ չենք ունենա,-հայտարարեց Մալխազ Դոլիձեն

ԴԱՏԱԿԱՆ

«ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ի ՆԱԽԿԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՆԻԿԱ ԳՎԱՐԱՄԻԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԵՑ ՀԵՆՑ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Մայիսի 16-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը հրապարակեց «Ռուսթավի 2»-ի գործով հեռուստաընկերության նախկին գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիայի գործով վճիռը:

Դատավորի որոշմամբ, Նիկա Գվարամիան դատապարտվել է երեք տարի վեց ամիս ազատազրկման, նա կալանավորվել է հենց դատարանի դահլիճում:

Դատախազությունը «Ռուսթավի 2»-ի գործով Նիկա Գվարամիային, ինչպես նաեւ «Ռուսթավի 2»-ի նախկին ֆինանսական տնօրեն Կախա Դամենիային եւ «Ինտեր Մեդիա Պլյուս»-ի գործադիր տնօրեն Զուրաբ Իաշվիլուն մեղադրանք էր առաջադրել 2020 թվականի սեպտեմբերի 6-ին: Հետաքննությունը Նիկա Գվարամիային մեղադրում է «Ռուսթավի 2»-ի մոտ 6,6 մլն գույքի յուրացման, ապօրինի եկամուտների օրինականացման եւ պաշտոնական լիազորությունների չարաշահման մեջ:

Վրաստանի դատախազությունը Նիկա Գվարամիայի դեմ գործ էր հարուցել դեռեւս 2019 թվականի ամռանը, երբ Գվարամիան «Ռուսթավի 2» հեռուստաընկերության գլխավոր տնօրենն էր: Դատախազությունը նրան մեղադրում է «սեփականության իրավունքի ապօրինի յուրացման, առեւտրային կաշառք ստանալու, պաշտոնական փաստաթուղթ կեղծելու, ինչպես նաեւ, չարաշահելով պաշտոնական դիրքը, մի խումբ խոշոր չափերի ապօրինի եկամուտներն օրինականացնելու գործով»: Նշենք, որ Նիկա Գվարամիայի հետ նույն գործով մեղադրվող Կախաբեր Դամիան տուգանվել է 50 հազար լարիով, իսկ Զուրաբ Իաշվիլին՝ արդարացվել է:

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ՝ ԳՎԱՐԱՄԻԱՅԻ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԹԵՄԱՅՈՎ

Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կառավարման տարիներին բարձր պաշտոններ զբաղեցրած Նիկա Գվարամիայի ազատազրկմանն անդրադարձած մի շարք կազմակերպություններ ու քաղաքական գործիչներ:

Վրաստանի կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը կարծում է, որ դատարանն օրինական որոշում է կայացրել Գվարամիայի դեմ: Իշխող կուսակցության ներկայացուցիչները Գվարամիայի դատավճռում քաղաքական երանգ չեն տեսնում:

- Օրենքը բոլորի համար է, տվյալ պարագայում այն առնչվեց Նիկա Գվարամիային: Նա կոնկրետ հանցագործություն է կատարել: Դա հանցագործություն էր լրատվամիջոցների դեմ: Գվարամիան կողոպտել է հեռուստաընկերությունը, տեղեկացված լինելով, որ այն մի քանի ամիս անց փոխանցվելու է օրինական տիրոջը: Դա փաստորեն գործարք էր սեփականատերերի եւ գլխավոր տնօրենի միջեւ: Նրանք գիտեին, որ արդարացի հրաժարվելու են այդ հեռուստաընկերությունից, քանի որ ապօրինաբար խլել էին օրինական տիրոջից: Ընկերությունը, որը վերադարձվելու էր, կողոպտել են, 6,7 միլիոնի չափով, որի համար եւ ազատազրկվել 3,5 տարով: Գտնում եմ, որ դա լրիվությամբ համապատասխանում է իրավական սկզբունքներին,- հայտարարել է «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Վրաստանում ԱՄՆ դեսպանատունը հայտարարեցլ է, որ «Գվարամիայի գործով այսօրվա որոշումը կասկածի տակ է դնում Վրաստանի հավատարմությունը օրենքի գերակայությանը»: Ըստ դեսպանատան հայտարարության, այն ֆոնին, երբ Վրաստանն աննախադեպ հնարավորություն ուներ խորացնելու իր եվրատլանտյան ինտեգրումը, նույնիսկ քրեական հետապնդման քաղաքականացված ընկալումը վնասակար է:

ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵՑԻՆ «ՎԻՎԱՄԵԴ» ԿԼԻՆԻԿԱ

Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն Ռուսթավիի թիվ 12 հաստատությունից տեղափոխել են «Վիվամեդ» կլինիկա, որտեղ պատրաստվել է հատուկ բաժանմունք: «Վիվամեդ»-ում խստացվել են անվտանգության միջոցառումները, մոբիլիզացվել իրավապահները:

Նշենք, որ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առողջական վիճակի բարդացման պատճառով, Սաակաշվիլիների ընտանիքը նրան արտասահմանում բուժելու պահանջով վերջնագրի տեսքով դիմել էր իշխանություններին: Այդ պահանջի պաշտպանությամբ, հանդես եկան նաեւ ընդդիմադիր մի շարք կուսակցություններ: Ի պատասխան այդ պահանջի, մայիսի 10-ին Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն հայտարարել էր, որ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն առաջարկել են հետազոտություններ անցնել «Վիվամեդ» կլինիկայում: Նրա խոսքով, անհրաժեշտության դեպքում, Սաակաշվիլին համապատասխան բուժում կստանա: Այս հարցի առնչությամբ նա հայտարարություն է տարածել նաեւ Facebook-ում՝ նշելով, որ մի քանի պայման է դրել՝ կապված «Վիվամեդ» կլինիկա տեղափոխվելու հետ: Ավելի ուշ, արդարադատության նախարարությունը հայտարարություն է տարածել՝ կոչ անելով Սաակաշվիլուն՝ առանց վերապահումների օգտվել առաջարկվող բժշկական ծառայություններից: